

Ա Մ Ր Ա Ն Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

Խաղաղութեամբ ընդհանուր, անաւասիկ երեկոն
Կը տարածուի յամբար, գոյնի հազար խաղերով:
Յոյլ շարժումներն մարդերուն, քաղաքին մէջ հոս ու հոն
Ամբան տօրի կապանքէն ալ կ'արձակուին նազանքով:

×

Զի շարժիր ոչ մէկ տեղէ, մթնոլորտին մէջ միայն
Քանձոր է հովը տալէն. քանձորութեան մէջ այդ սակայն
Երազներու պատաններ քիչ մ'ամենուն կը կառչին
Բայց ամպերու պէս անգայտ, կը ծփան ու կ'անհետան:

×

Ամբան երկա՛ր երեկոն, կարաւան մ'է որ կ'անցնի
Բեռնաւորուած քանկարժէք արեւելեան իրերով,
Որոնալով անհասնում յիշատակները կեանքի
Մինչեւ հասնի հասակն իր զանգակներու ձայներով:

×

Կը մարմնրին, կը մեռնին, լոյսերն ամէն շառագոյն
Մեղմ հովին հետ կը յառնեն, բոյրեր՝ ուրիշ չես գիտեր,
Եւ ծառերուն մօտը քաց՝ խորհուրդներու պէս ծովուն
Տարերքի մեծ գաղտնիքէն յուշիկ, յուշիկ կը պատմեն:

×

Ունի ամբան երեկոն տարօրինակ փայլներ.
Մանուկին պէս որ բռնել կ'ուզէ լուսինն երկինքէն
Տղայ մ'այնտեղ խորատոյգ, կը մտածէ աներեւ
Իր մեծ սիրոյն որ ա՛հ, միտ, լուսինին պէս կուտայ խոյս...:

×

Խաղաղութեամբ ընդհանուր, կը տարածուի երեկոն
Գոյնի հազար խաղերով, մարդերու յոյլ շարժումով...:

ԶԱՒԷՆ Վ. Զ.

